

«ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

—

Ամառային ուղևորութիւնից դէպի Հայաստան. — Նկատողութիւններ
և քաղաածներ հայկական ձեռագրերից. գրեց Նիկ. Մառ. (Թարգ.)

Վիեննա 1892.

Վիեննայի Մխիթարեան հայրերը սկսած 1887 թիւից հրատա-
րակում են «Հանդէս Ամօրեայ» քաղաքական — ուսումնական — գրա-
կան թերթը և ով որ ծանօթ է նրա բովանդակութեան, նրան
քաջ յայտնի կըլինի, թէ ինչ աստիճանի հմօրէն, զուտ գիտ-
նական ընթացքով խմբագրւում է այդ թերթը, նրան յայտնի կը-
լինի, որ նրա երեւալուց սկսած հայ գրականութեան, պատմու-
թեան և այլն մասին եւրոպական հայագէտ գիտնականների ար-
տայայտած ոչ մի կարծիք մեզ այլ ևս անծանօթ չի մնում, որ
նրա մէջ երեւացել են և շարունակում են լոյս տեսնել մի շարք
գիտնական հետազօտութիւններ նուիրուած մեր գրականութեան,
պատմութեան, բաւական է յիշել «Հայ լրագրութեան պատմու-
թիւնը» Վ. Գաթանգեղոսի, «Ստոյն — կալիսթենէսի» Չին հայե-
րէն ռամկերէնի» և այլն քննութիւնները, սակայն բացի այդ
ինքնուրոյն թերթի բովանդակութիւնը կազմող ընտիր յօդուած-
ներից, նա միջոց ունի մեզ տալու մի շարք գեղեցիկ թարգմա-
նական և ինքնուրոյն գրքոյկներ դիւրամատչելի գներով. և ա-
հա այդ հրատարակութեանց եօթներորդն է, որ մենք ստացել ենք:
Նրանք առաջ մաս մաս լոյս են տեսնում ամսաթերթի մէջ և
ապա առանձին: Մեր ստացած գրքոյկի բովանդակութիւնը ար-
դէն յայտնի է ընթերցող հասարակութեանը: Այդ Պրօֆ. Մառի
հաղճեպով և արագ կատարած մի աշխատութեան արդիւնքն է
իր մօտ երկու ամիս իջմիածնի մատենադարանում պարապման,
սակայն նրա մէջ շոշափուած են այնքան հետաքրքիր կէտեր մեր
մատենագրութեան պատմութեան վերաբերեալ, որ Մխիթարեան
հայրերը արժանի են յատուկ շնորհակալութեան նրան ամբողջա-
պէս թարգմանած և լոյս ընծայած լինելու համար: Յարգելի
պրօֆեսորը իր այդ փոքրիկ աշխատանքով ցոյց տուեց, թէ դեռ

ինչքան հետաքրքիր նիւթեր կան մեր Ս. Էջմիածնի մատենա-
մատենադարանում՝ ամփոփուած, որ մինչև այժմ անմշակ են
մնացել և աշխատողների են սպասում: Աշխատելու ամենամեծ
գոտարութիւններից մէկն էր կանոնաւոր ցուցակի պակասու-
թիւնը: Այժմ սկսել ենք այդ գործի իրագործման վրայ աշխա-
տելու, յոյս ունինք կըյաջողուի մեզ գլուխ բերել մեր սկսածը
մանրամասնորէն ցուցակադրել Ս. Էջմիածնի մատենադարանի
3186 ձեռագրերը: Յուշակ կազմելու ծրագիրը Վիեննայի Մի-
թարեանց ընդունածն է:

Ֆ.

1892. Էջմիածին.

13 Նոյեմբ.

ANECDOTA OXONIENSIA.

A collation with the ancient armenian versions of the greek text of Aris-
totle's Categories de interperatione, de mundo de virtutibus et vitiis and of
Porphyry's introduction by Fr. C. Conybeare.

Oxford. 1892 4).

Սոյն վերնագրով հետաքրքիր ուսումնասիրութիւնը կրկնակի
օրինակով շնորհակալութեամբ ստացաւ Ս. Էջմիածնի մատենա-
դարանի համար արժանապատիւ մատենադարանապետ Սահակ
աբեղայ Ամատունին: Նուիրողն է ինքը մեծարգոյ ուսումնասի-
րող հայագէտ Կոնիբերը: Ուսումնասիրութիւնը նուիրուած է
Հայոց թարգմանական գրականութեան ամենահետաքրքիր հար-
ցերից մէկին, այն է՝ Արիստոտելի գործերից մի քանիսի, նրանց
մեկնութեան և Պորփիւրի ներածութեան թարգմանութեան ժա-

1) Երան. Օքսֆորտի մասնագիտական ժողովածու: Համեմատութիւն
հին հայերէն թարգմանութեան և յոյն բնագրի Արիստոտելի ստորագու-
թեանց, յաղագս մեկնութեան, յաղագս աշխարհի, յաղագս առաքինու-
թեանց և յանցանաց և Պորփիւրի ներածութեան: